

բայց այսուհետ որ թիվներն ալ ծածկուցը դեռ ևս ընդհանրացած չէ։ Բնակիչները մասին միայն այսքան կարելի է ասել, որ առաջին դասակարգը չափազանց կոպիտ է. օտարականներն, մասնաւորապէս իրանական սեռի հետ է շրջում, միշտ հանդիպում են փոքրիկ չարածիւր պատանեակներ անվայել սրահներով լինելով։ Այնքան զարմացուցիչ ունի և մի գովելի հիմնարկով լինել, այն է աղքատները օրինաւոր հոգաբարձութիւն, որը կամուրջ նպաստներով օժանդակում է քաղաքի չարածներին, տարեկան մի քանի հազարներ բաժանելով։

Ամսիս 19-ին, առաւօտեան 6 ժամին մեկնեցինք Ալեքսանդրապոլից դէպի Անի. երեք և քառորդ ժամում հարանք Անի։ Հնուրէնց երբ բարձրանալով երկու բլուրների կրճից՝ իջնում էք ծագ, պատկերահում է ճանապարհորդի առաջ մի հիանալի տեսարան.— ընդարձակ դաշտի ծայրում կարծես մի բարձր լեռան ստորոտին կայծ բարձրաբերձ պարսպով, և աշտարակներով ամրացած մի շէն աւանի տպագրութիւն է թողնում։ Սա, կայն մի տեսակ զգացմունք ծնւում է քեզ և դու ստիպւած պիտի բռնես կառավարներին, թէ չուտ, չուտ թողնու կառքը... և ահա հասնում հաստապիւղ ամրոցի պատին, մտանք առաջին դռնից, կրկին պարիսպ, հասնում երկրորդ դռնը... Բայց, աւաղ, այժմ հիտարակովում է ճանապարհորդը, կորագլուխ, ձեռքերը քաշ արած նայում են աւերակների կոտորներին, որ հեռուից պարիսպը ծածկել էր ճանապարհորդի աչքերից։ Տեղ տեղ կանգնում են մնացած մի քանի շինութիւններ։ Մտիւր այդ աւերակների մէջ, որոնք միայն հեռքեր են անցնել փառքերի,— ահա եկեղեցի, ահա Բագրատունեաց պալատի մնացորդը, ահա կաթողիկոսարանը իր կողքին կայծ բարձր դիտանոցով, ուր մինք բարձրացանք 88 աստիճան օժանդակ ըստեղ պահպանողներով մինչև զագաթը, ահա երբեմն հարուստ շուկաների հեռքերը, բաղանիքների պատերը, աղբիւրների հեռքեր, հոյակապ կամուրջների մնացորդ և այլն և այլն։

Մենք առժամանակ հանդիստ առանք վանքապատկան մի նոր շինութիւն մէջ. քիչ ժամանակից յայտնվեց և վանահայր Ներսէս վարդապետը, Տիգրանեան աղբանուծով, որ երբեմն եղել է վարդապետ վանքում աշակերտ, վերջը Պօլսի մէջ աղեղայ ձեռնադրվելով մի քանի տարի մնացել է Երուսաղէմի միաբանութեան մէջ, իսկ 72 թ. ևսկանից կարգված է եղել Ղօշայ վանքի վանահայր, 1874 թ. ևսկանին Անի աւերակների վերակառուցումը նոր պաշտօնով մնում է մինչև այժմ Անիում։ Այժմ Անիի մէջ բնակում են չորս տուն հայեր, որոնք վարում են վանքապատկան հողերը, ստանալով վանքից տասնորդը։ Այս տարի բաւական առատ է հունձը թէ Շիրակում և թէ Զաւարթնոթում, այնպէս որ մեր ճանապարհորդութեան միջոցում զիւղացիներից ամեն տեղ գտնվեան խօսքեր էին լսվում։ Վարդապետի մօտ ձգված է միջոցից ժապաւենեալ մատնան, ուր իւրաքանչիւր այցելու ստորա-

գրում է, որքան կամենայ յօղուտ վանքերի վերաշինութեան և հակողութեան, բայց վարդապետի բաժինն անտարակոյս կնկնապատկել է լինում, ինչպէս հղարակաբեր նրա խօսքերից, երբ նկարագրում էր իր նիւթական խղճալի գրութիւնը, ուստի այցելուներ խղճահարկած աշխատելով կըրկնապատկել է դնում հայր սուրբի ձեռքում։

Եկեղեցիներից աւելի հաստատուն են մնացած ու Վաթիկէն մայր եկեղեցին և ս. Լուսաւորչի եկեղեցին, որին ասում են Նախշի քիլիսայ։ Այս երկու եկեղեցիներում, ինչպէս ասեց հայր սուրբը, լինում է երբեմն ժամերգութիւն, երբ այցելուներ շատ են լինում, կամ մեծ տոներ են լինում, ուստի և այս եկեղեցիներն պահպանվում են առանձին հակողութեամբ, կառուցած են նոր դռներ, և կան պատկերներ։ Կանգուն թէ աւերակ եկեղեցիների արտաքին պատերը ծածկված են հայկական արձանագրութիւններով, որից յայտնվում են որ թակակներ և ում ձեռքով շինված լինելը։ Ձը նայելով որ Լուսաւորչի եկեղեցու արտաքին պատերի վրա նոյնպէս փորագրված են հայկական տառերով արձանագրութիւններ, սակայն եկեղեցու ներսը պատերի ուղիղակ գլուխների վրա նկարներն արձանագրութեան յիշատակներով, որպիսիները մոլորեցնում են պատմութեան անձնօթ օտարազգի այցելուներին, թէ յիշեալ եկեղեցին կամ ճարտարապետութիւնը յունական է։ Անիի աւերակների մասնաւոր նկարագրութիւնից միջ հեռու պահելով, չենք կարող չը դարձնալ սինոդի այն կարգադրութեան մասին, որով վերացել է Անիի վրա հողաւոր հողաբարձութիւն և այդ գործը յանձնել արեւելայն... Այն ժամ շրջելով Անիում, և ճաշից յետոյ ժամը երեքին մեկնելով հարթ դաշտերով, երեկոյան, մեք և կէս ժամում հասանք Ալեքսանդրապոլ, ճանապարհին հանդիպելով շատ և շատ հնութիւնների բնիւրներին, և վանքերին։ Ալեքսանդրապոլից մինչև Անի կարելի է հաշուել մօտաւորապէս 30—35 վերստ։

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 28-ին

«Մշակի» № 110-ի մէջ լոյս տեսած Նոր Բայազէտի նամակում յօդուածագիրը խօսելով Նոր-Բայազէտի հասարակական հիմնարկութիւնների անմիջապէս դրութեան մէջ լինելու մասին, գրում է և հետեւեալը. «Եկական երկսեռ դպրոցը դեռ չէ բացված, ուսուցչական խումբը կազմված չէ։ Հողաբարձութիւնը այս ու այն բարեկամի երկրպագուին է պաշտօն տալիս։ Գյուղացի նիւթական գրութիւնը օրից օր ընկնում է, նրա նախկին 4,000 ր. դրամագլխի փոխարէն այժմ մնում է միայն 2,000 ր., որի ստանալը ներկայ հողաբարձութիւնը զգուշացնում է։ Այնպէս որ դրամական պէտքերը է ասել, որ եկող տարի նիւթական մասը բոլորովին կընկնի և իմ է հողաբարձութիւնը այնպէս գործի, ինչպէս այժմ, մի

երկու տարուց յետոյ ստիպված կը լինի փակել ուսումնարանները»։

Պարտականութիւն եմ համարում այդ անտեղի յարձակումը հրեքի յետագայ հաստատ փաստելով և ապացոյցներով։

Ներսէսի նախկին առաջնորդ Սուրենեանց սըրբազանի հաստատութեամբ, Նոր-Բայազէտի երկսեռ ուսումնարանը, սեղանական երկրագործական հանգամանքների պատճառով և համաձայն ուսումնարանական կանոնադրի վերջին յօդուածի՝ բացվել է և բացվում է ոչ առաջ քան սեպտեմբերի 25-ը։ Այս ուսումնական տարվայ ուսուցչական խումբը 25 օրից աւել է ինչ կազմված է, բացի հայոց լեզուի մէջ ուսուցչից, որի հետ 8 օր է, ինչ պայման է կապած։ Հողաբարձութեան անդամներին և ոչ մի բարեկամ, անգամ և ծանօթ ուսուցչի հրաւիրված չէ։ Իսկ առաջ-ուսուցչիչը նշանակված է Ներսէսի առաջնորդ Սուրենեանցի կողմից։ Ընտրութեամբ և հաստատութեամբ։

Ուսումնարանի դրամագլուխը արդարև ուղիղ 10 տարի առաջ 4,000 ր. էր, որը տուած էր Խոնտով զանազան անձանց, բայց նախկին հողաբարձութեան աւելի լաւ արեցին այդ դրամագլխի մի մասով ուսումնարանապատկան հողի վրա խանութներ կառուցանելով և միւս մասով ուսումնարանի հին շինութիւնը և հին խանութները նորոգելով, որից աւելի շատ է արդիւնք ստացվում և աւելի շատ ապահով է, քան մասնաւոր մարդկանց մօտ շահեցնելը։ Մնացած 2,000 րուբլով էլ ներկայ հողաբարձութիւնը մտադիր է դարձնալ մի կալուածք շինել ուսումնարանի համար։ Հայոց ուսումնարանների բացվելուց մինչև այսօր Նոր-Բայազէտի երկսեռ ուսումնարանը միշտ առաջադիմութիւն է հարել, ինչպէս մօտեցնում աւելանալու, նոյնպէս և ծախսը ընդարձակելու կողմից։ Առաջին տարին 4 ուսուցիչ էին 130 աշակերտ, երկրորդ տարին 6 ուսուցիչ 200 աշակերտ, իսկ երրորդ (անցեալ) տարին 8 ուսուցիչ 250 աշակերտ, դրա համեմատ եկամուտով և ծախսով իսկ թէ սրանից յետոյ ինչպէս կը լինի, մօտ ապագան ցոյց կը տալ. դուշակելը աւելորդ է։

Հողաբարձութեան անգամ՝ Ա. Բատիկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսից մեղ գրում են սեպտեմբերի 21-ից «Արեւիք» արտատպեց «Մշակի» խմբագրին մի յօդուածն Պարիզի ուղևորութիւններից. այդ մասը այնքան ջերմ ընդունելութիւն է գտաւ ամեն կողմից, որ «Արեւիք» հարկադրեցաւ դադարեցնել իր վերապատմութիւնը և շարունակել արտատպումն ալ։ Արժուրէի ուղևորական բոլոր յօդուածներուն Այդ յօդուածները շատ համակրալիք ընդունելու հետ, մասնաւորապէս կանանց մէջ։

Կ. Պօլսի մեր թղթակիցը մեղ գրում է. «Արձապանք» կը հրատարակէ Պօլսէն փոքրիկ անդեկու-

թիւն մը թէ՛ սխալ է «Մշակի» Կ. Պօլսի թղթակցին այն լուրը, որով համեմատ Մուսա պէյ և Հայրիկ տեսակցեր են միմեանց հետ։ Եւ կը յաւելու թղթակիցը թէ՛ Հայրիկ երբեք չէ հաճած տեսակցել այդ աւագակապտին հետ, հետեալ բար անհիմն է երկար խօսակցութեան մը նկարագրերն Մեղ այնպէս կը թուի թէ «Արձապանք» այսպիսի բաներ ցրողը քիչ թէ շատ չարամտութեամբ կը վերնաբերվի «Մշակի»։ Գրուած չէր թէ Հայրիկ և Մուսա պայ տեսակցած են, այլ գրուած էր թէ՛ Մուսա պէյ լուր խրկել է Հայրիկի և խնդրել է անոր բարեխօսութիւնը, Հայրիկ ալ մերժել է։ Ինչպէս կը տեսնուի «Արձապանք» մէջ հրեքում կը տպուի «Մշակի» այնպիսի մի լուրի, որը արդէն գոյութիւն չունի «Մշակի» մէջ ալ»։

«Արեւիք» լրագրից հաղորդում է, որ կենտրոնական դպրոցի տեսուչ պ. Մինաս Չերապ հրաժարված է իր պաշտօնից։ Մեր ստացած տեղեկութիւններին նայելով, պ. Չերապ այժմ Կ. Պօլսում չէ։

Մեղ գրում են Կ. Պօլսից. «Օսմանեան քօռվէթ» մը որ Երեւանի կողմերը գնացած էր հանքային ածուխ բերելու, անցեալ շաբաթ մէջ ընկղմեցաւ Այդ քօռվէթին մէջ կային 50 սպայներ, ամենքն ալ տաճիկ, որը իրենց նաւագիտական ուսուցիչ աւարտած նաւային դպրոցի մէջ իբր փորձառական դաս կը պարտէին նոր շտեմարտով, ամենքն ալ խեղդուած են։ Այս լուր խորին աղպաւորութիւնն ըրաւ Կ. Պօլսի վրայ»։

Մեղ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց մի քանի դպրոցների մէջ սեպտեմբեր ամսին տեղի են ունեցել մի քանի այնպիսի դէպքեր, որոնք այնքան տարօրինակ և անմիտ են, որ նոյն իսկ դժուար հաւատալի են երևում։ Սակայն դրանք փաստեր են և այդ պատճառով հարկաւոր ենք համարում մատնանել անիւ դրանց վրա։ Գյուղացիները վարչութիւնները օգոստոսի վերջերին ուսուցիչ են հրաւիրում, մանկավարժական ժողովում ուսուցիչներին յանձնարում են որոշ քանակութեան դասեր. ուսուցիչները սկսում են պարապել, և ահա երբ արդէն սեպտեմբերի 5-ը, կամ 10-ն է, յայտնում են ուսուցչին, որ նրա դասերը պակասեցնելու են, կամ նրա դասերը յանձնվում են ուրիշին.— որովհետև այն ուրիշին էլ հարկաւոր է դասեր տալ.— Երևակայել հեշտ է այն վարժապետի դրութիւնը, որի դասերը պակասեցնում կամ խլում են սեպտեմբերին արդէն։ Հետաքրքրական է իմանալ՝ այդ անարգար, անմիտ կամայականութիւնն էլ մասնկալաւ մի քանի համարվում, թէ հիմնված է այն թէօրիայի վրա, որ և հայ վարժապետի գլխին միշտ կարելի է «կախալ» կոտորել։

«Իվերիա» լրագրին ՍՈՒԽՈՒՄԻՑ գրում են, որ Գուգաւթի շրջակայքում գտնվել է արձաթիւ և արճիճի հանք։

աշխարհագրութեան անունով ուսում ամենին չը կայ... Բ դասարանում աւետարան են թարգմանում, իսկ Գ դասարանի աշակերտները դեռ ևս լաւ կարդալ և հասկանալ չը կը գիտեն...

Բայց արի տես, որ Բ դասարանում «mon père»-ի և տաճկերէնի միւլ է քրէթ, միւլ է զաֆիւն իւլ է հ, և այլն հոլովների վրա գլուխ են տրաքեցում։

Մի նոր դասագիրք է դուրս եկել Ուսումնական խորհրդից վաւերացեալ և կոչվում է «Բնութա-ժառանգութիւն»։ Բնութաւորութիւն և այլն... մի երես կարգաւ, թէ այդ ֆրանսերէնից բառացի թարգմանութիւններից մի բան հասկացար...

Եթէ ասեմ թէ, թիւրքահայերը ունեն բազմաթիւ տպագրված դասագրքեր, սակայն բոլորն էլ այբուբեն բաներ են, պիտի դարձանա... Կուրդս իւրաքանչիւրից մի օրինակ ուղարկեմ քեզ, դու մանկավարժ ես, քննիր և կը համոզվես, թէ ինչու են իմ կարծիքով դասում եմ նրանց և դասապարտում առաւօդաֆիւն...

Առաջնորդը վաճառում է իր մօտից նրանց, որոնք մի աման սեր, կամ մի գուռ և կամ մի այլ նուէր չեն բերել... Ինչ անէ խեղճը. միշտ ոսկի է դիզում և ամեն տեղ խօսում է թէ անօթի է քեզ և «չեղեղով» է միայն կերակրվում... Խեղճ ոսկիներ դիզող առաջնորդը Երեւանի մի գործի համար առաջնորդարան մտայ։ Բարձրանում եմ սանդուղաներից և բաց եմ առնում ծառաների սենեակը, ահա այնտեղ օթոցի

վրա պաւակել է նրա յոյն ծառան, ոտները ամերիկացու նման բարձր դրած։

— Սրբազանը ներսն է, հարցնում եմ հայերէն.

— Սրբազան ես թ միշ (քննել է) ասում է յոյնը առանց դիմել փոխելու։

Գուրս գնացի և մտայ միւս սենեակը, այնտեղ էլ մի մորթ փռած, վրան տաճկական աղօթքն էր կատարում առձիկ ծառան.

Ստիպված եմ սպասել մինչև աղօթքը վերջանայ և հարցնում եմ հայերէն.

— Սրբազանը ներսն է,

Եւ ահա ուսումի պէս գլխիս իջաւ տաճկի հետեւալ խօսքերը.

— Աղաւ դիւլի ս է օյլ է (մարդու լեզու խօսիր)։

— Սրբազանը ներսն է, ստիպվում եմ հարցնել տաճկերէն.

— Ինչ գործ ունիւր.

— Գործ ունեմ իր հետ.

— Ախր ինչ գործ...

Բարկութիւնս եկաւ և կամեցայ դուրս գնալ։ — Սրբազան ես թ միշ (քննել է), գոչեց ետեկցութեամբ։

Ինչ խայտառակութիւն... առաջնորդարանը լցվել է թրքութիւնով և այնտեղ իսկ համարձակվում են հայերէն լեզուին մարդու լեզու չը համարել...

Այդ օրը երեք անգամ եկայ սրբազանին տեսնելու և միշտ գոռում էին երեսու ի վեր.

— Սրբազան ես թ միշ (քննել է)։

Չորրորդ անգամին վերջապէս աղօղակեց նրան տեսնել, երբ թուրքի պէս ուղիղաւ վարդիկով և չիւր ամանը ձեռքին, վերագաւնում էր սենեակ...

Նա հագել էր մի մինչև ծնինըրը հասնող կանաչ վերարկու, կանաչ լայն գոտիով (կանաչը նուիրական գոյն է տաճկիների համար). կուրծքը բաց էր, թեւերը վեր քաշած, սպիտակ վարդիկը հասնում էր մինչև ծնինըրը, սրունքը բաց և ոտքին մի կարճ գուլպա և գլխին կրում էր մի կարմիր ֆէս...

— Կարմիր ֆէս է դրել մրախասը (առաջնորդ), պարծնում են թուրքերը։

Հաղիւ թէ Սրբազանի հետ տեսնվելուց յետոյ շուկան դնացի, որ այնտեղ պատմում էին մի այսպիսի բան.

Քիւրդերից փախցրած մի հայ աղջիկ եկել է առաջնորդարան, յայտնել է որ ինքը այն ինչ հայի աղջիկն է և չի ուզում թուրք մնալ և պաշտպանութիւն է խնդրել։ Սրբազանը վաճառել է նրան իր մօտից։

Այժմ ես հասկանում եմ թէ ինչու այս թուրքերը և յայնքը շատ գովում են առաջնորդին և Մուստաֆա փաշան ասել է, թէ, Էրզրումը սրա պէս լաւ առաջնորդ չէ տեսել...

Բարեկամ, այս ուր գնացի ես. դպրոցից— դասագիրք և դասաղբիւր— առաջնորդ... Ինչ արած, գոցել այդ բոլոր միմեանց հետ կապ ունեն...

Նամակովը հարցնում ես, թէ միթէ Էրզրումի մէջ չը կան լաւ երիտասարդներ։

Ինչու չէ, երկու—երեք հատ չի կ հագնված, փոքր ինչ ֆրանսերէն կտորտող և կազիւ օր (սրճատան) մէջ բարձրաձայն «հնչական եղանակի» վրա խօսող երիտասարդներ կան, որոնք այս տարի մօղա են արել ուսումնական լեզուն ծաղրելու, «Արեւիք» մէջ սրա նրա գրուածքները հրապարակի մէջ քննադատելու և յետոյ մի գիւնետան մէջ փոքր ինչ կոնծելուց յետոյ, փողոցներում թափառելու և եկեղեցի ու վրձնեղու գնացող գեղեցիկ տիկնանց մօտից անցնելու ժամանակ ձայնարկութեան մէջ գտնվող բոլոր «սխալները, հնչերը... արտասանելու»։

Մէկը կայ դրանց մէջ որ շատախօսութեան մի տիպ է. եթէ նա հայերէն չը խօսէր, պիտի կարձէլ թէ ֆրանսիայում կրթված մի կապիկ է... հագնում է չիւր, խօսում է կոտորվելով, պատմում է հաճելի փոքրիկ անբարոյական անեկդոտներ և ուր,— ընթերցաբանների մէջ...

Մի ուրիշն էլ կայ, որ մի ծիծաղելի լրջութիւն է կամուրում միշտ ունենալ, ախ ու վախ է քաշում որ հայերը չեն կարողում Արիստոփան, Գեկարտ և այլն։

Եւ հերքել է։

Ապրօ

Յ Ա Յ Տ Ա Բ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Տիկին ՄԱՐԳԱՐԻՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆ և տիկին ԱՆՆԱ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆ, որքան ցանկացանք իր անձնին իր անձնին, իսկ երկրորդը իր քրոջ՝ վարժուհի տիկին ՎԱՐԴՈՒՆԻ ՌԱՖԱԵԼԵԱՆԻ մահը, որը տեղի է ունեցել Բաղուսում, խնայում են հանգուցեալի բարեկամներին և յարգողներին ներկայ լինել նրա հոգեհանգստին, որը կատարվում է հոկտեմբերի 1-ին, կիրակի օրը, Թիֆլիսի Զիզուաշենի եկեղեցում, առաւօտեան 10 ժամին, ս. պատարագից յետոյ: 1—1

ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի տեղեկութիւն ընդհանրութեան, որ քաղաքային խորհրդարանը ի 29 սեպտեմբերի 1887 թւին, ի 15 օգոստոսի և ի 22 սեպտեմբերի 1889 թւին կայացրած վճիռներով կարգադրել է.

- 1) խորհրդարանի առաջիկայ 1890—1894 քառամեակի ձայնաւորներ ընտրելու մասին կազմել քաղաքային ընտրողական ժողովներ, առաջին կարգի համար—9-ին և երկրորդ կարգի—11-ին յունվարի 1890 ամի:
 - 2) երրորդ կարգի ընտրողներին բաժանել հինգ ուղիղ խմբերի. կանգնողները առաջարկելու համար հրաւիրել կարգաւ այդ խմբերը—13, 14, 15, 16, և 17 յունվարի 1890 ամի, իսկ ձայնաւորներ ընտրելու համար—19, 21, 23, 25 և 27 նոյն իսկ յունվարի:
 - 3) ջր պահանջել կառուածատէրերից նրանց կառուածների վրա 1864 թւից սկսած մինչ 1879 ամի մնացած քաղաքին հասանելի ապագիւնները:
 - 4) ջր պահանջել կառուածատէրերից այն տուգանքը, որ նրանք պէտք է վճարէին քաղաքի օգտին կառուածներից հասանելի 10% տուրքը իր ժամանակին չը վճարելու համար մինչև 29 սեպտեմբերի 1887 ամի, բացի այս չը պահանջել այս տեսակ տուգանքը 29-ից սեպտեմբերի 1887 ամի մինչև խորհրդարանի նոր կազմակերպելու:
 - 5) ընտրողական ցուցակներն աւարտել 1 հոկտեմբերի 1889 ամի:
 - 6) վարչութեան պատրաստած ընտրողական ցուցակները յայտնել ի տեղեկութիւն ընդհանրութեան 1 նոյեմբերի 1889 ամի, բաժանելով քաղաքայիններին, նմանապէս կայանելով քաղաքի յայտնի տեղերում և խորհրդարանի դահլիճում 200 օրինակ տրվելով ցուցակներին:
 - և 7) քաղաքի բնակիչներին դանդաղեցնել ընտրողական ցուցակներին մէջ պատահած սխալների մասին ընդունել քաղաքային վարչութեան մէջ 1-ից մինչև 15-ն նոյեմբերի և այնուհետև, համաձայն 27 յօդ. քաղաքային կանոնադրութեան, ուղղված ընտրողական ցուցակները ներկայացնել խորհրդարանի հաստատութեան, անպատճառ մինչև 5-ն դեկտեմբերի 1889 ամի:
- Ընդ սմին քաղաքային վարչութիւնը հարկաւոր է համարում զոգուցանել քաղաքի բնակիչներին, թէ թէպէտ սոյն յայտարարութեան 5-րդ հատուածում յիշած ընտրողական ցուցակներին աւարտման ժամանակամիջոցը խորհրդարանը նշանակել է 1-ն հոկտեմբերի 1889 ամի և այդ ընտրողական ցուցակներին մէջ, համաձայն 4-րդ ծանօթութեան 17-րդ յօդուածի քաղաքային կանոնադրութեան, անկարելի է մտցնել քաղաքի այն բնակիչներին, որոնց վրա մինչև յիշեալ ժամանակը մնացած կը լինեն ապագիւնները քաղաքին հասանելի տուրքերից, բայց համաձայն հրամանի պետական սեռաւոր 5-ին փետրվարի 1885 ամի, № 1312, որով բացառված է քաղաքային կանոնադրութեան 17-րդ յօդուածի իսկական միայն, յիշեալ բնակիչները պէտք է մտցնվեն ընտրողական ցուցակներին մէջ 1-ն հոկտեմբերի 1889 ամի ժամանակից յետոյ էլ, միայն այն պայմանով, որ նրանք վճարեն իրանց վրա մնացած ապագիւնները մինչև այն ժամանակ, երբ քաղաքային խորհրդարանը վերջնականապէս կը հաստատէ ընտրողական ցուցակները: 1—3

Լոյս տեսաւ Կ. Պոլսում հրատարակող «ՄԱՍԻՍ» հանդիսի սեպտեմբերի 15-ի համարը՝ հետեւեալ բովանդակութեամբ. Արփիար Արփիարեան.—Ազգային առուելիւն. Գրիգոր Զօհրապ. Ուղեւորութիւն մը յիշատակներու մէջ. Արփիար Արփիարեան. Արարատ.—Կոյստանան գրականութիւն. Թեանիս.—Նորագիւտ թուղթ. Պատկերը. Գեղամ.—Լուսնակ գիշերով ուղեւորութիւն մը: «Մասիսի» տարեկան գինն է 2 ռուբլի: 1—1

Թեմիս սրբազան Առաջնորդի կարգադրութեան համաձայն հոկտեմբերի 1-ին, կիրակի օրը ժամը 12-ին ս. պատարագից յետոյ կատարվելու է քաղաքի Նորաշեն Ս. Աստուածածին եկեղեցու օրհորդաց ուսումնարանի հոգաբարձական ընտրութեան համար պատգամաւորների երկրորդ եւ վերջնական ընտրութիւնը: Նոյն օրը պէտք է կատարել և նոր երեցփոխանի ընտրութիւնը: Ուստի յիշեալ եկեղեցու մեծապատիւ ծխականները հրաւիրուած են նշանակված օրը եկեղեցի մասնակցելու ընտրութեան: Թիֆլիսի երեցփոխանի բարեկարգութեան վերաբերեալ Թովմանէն քահանայ Մարտիրոսեան: 1—1

Կուկիայի Նորաշեն ս. Աստուածածին աղայոց ծխական դպրոցի հոգաբարձութիւնը ստանալով յօդուած մանկական գրողարանի արժանապատիւ հայր զիւտ Ազանեանցից 20 օրինակ «Երրորդ Ոսկի», մանկական ընթերցանութեան համար զրբերը և կրօնի դասագիրք 7, օրինակ նոյն հեղինակի: Նոյնպէս և մեծապատիւ պարօն Զաքարիա. Գրիգորեանցից 1 օրինակ Գամառ-Քաթիկայի, 1 օրինակ մանկական երգարան, 1 նոյնը մանկական ձայնադրեալ ազգային երգարան, 1, «Հոգման հաւատարմութիւնը ամեն արգելք. յաղթ.» 1, «Խաւարից դէպի լոյս.» 1, «Ծերենցի երկունքը», 1, «Թորոս լեռնի» և 1, օր. «Թէպոս Ուշտունի»,—յայտնում է իր խորին շնորհակալութիւնը վերոյիշեալ անձանց: Ն. Գրիգորեանց, Ն. Արքամանց 1—1

Բժշկապետ ՐԷՅԻՍ վերադառնալով ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ, նորից սկսել է ընդունել ԱԶԲՈՎ հիւանդներին (Գրիգորեանցի կայա փողոց № 3): 5—5

Ուսուցիչ Թ. Լուսեֆեան ընդունուիւ է իր ընտանիքով ԳԻՇԵՐՈԹԻԿՆԵՐ: Այստեղ պատրաստվում են աշակերտներ արքունի և հայոց ուսումնարանների համար և կրկնութիւններ են անուան Գիմել հետեւեալ հասցէով. Կուկիայ, Սիմեոնովսկի փողոց, № 16: Մի և նոյն տեղը տրվում են վարձով և սենեակներ բոլոր յարմարութիւններով: 4—5

ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԳԱՍԵՐ
Տալիս եմ մանագիտաբար ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասեր՝ պարզ և կրկնակի խաղական, երբակի ուսուցող և անգլիական սխառնով:
Հարցնել Կաղեօնայա Պալատում պ. ՏԵՐ-ԱԿՈՐԵԱՆՑԻՆ. 5—5 (և. 2.)

ԱՊՐԱՆՔՆԵՐ ՏԵՂԱԽՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ Է ՄԻ ՊԱՀԵՍ

Հաւաքական գնով, Արաւ-Արաւիկի հրապարակի մօտ, Բոլշայա-Կրիկայա փողոցի վրա, տուն Բերինեանցի, № 12: Պահեստը գանձվում է բազի Կերտում: 2—3

ՍՊԵՏԱԿԵՂԵՆՆԵՐ ՊԱՏՐԱՍՏՈՂ ԳՈՐԾԱՐԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻՌԵՆԵԱՆԻ
Պատրաստում եմ զանազան տեսակի բրձրոտ կամ խաւով երեսաբերներ և բազիկի համար ամեն տեսակի շորեր. շապիկ, փաթակիկիք՝ մի-երեսանի, կամ երկու-երեսանի: Ընդունում եմ նաեւ պատուէրներ ձեռնառու գնելով: Գործարանս գտնվում է Հաւաքարում, հայի մարազիին դիմաց, տուն Միզգանիկի № 20: Իսկ իմ պատրաստած իրերէնները կարելի է գտնել Սիմի փողոցում, Արծրունի քարվասարայում: 2—6

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ չինգլաբլի, հոկտեմբերի 12-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգենաւը, նաւապետ ԺԻԲՈԻՆ (GIBOIN) զուրա կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսուն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւններին մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմբոլուի տան, Նաբերէֆայա, և Թիֆլիսում Նախկին Արծրունի գալիւրէում, № 114. (Ե.) 1—2

Ելմիածնում հաստատված ցուցակի երկրորդ կարգի ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ ՑԱՆԿԱՆՈՒՄ է հայոց ուսումնարաններում աւագ ուսուցչութեան կամ տնօրէնական ուսուցչութեան պաշտօն ունենալ, աւանդելով բացի ուսուցչից, բոլոր աւարկաները: Պայմանների մասին դիմել Ս. Լէքսանդրով Խաչատուր Շաթիրեանցին: 3—3

ՂԱԽԱՅԻ հայոց օրհորդաց ուսումնարանի համար հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑ-ՉՈՒՆԻ: Պայմանների մասին դիմել Խաչատուրեան 4—5 ժամը երեկոյեան, Կուկիայ, Սիմեոնովսկի փողոց, № 16. 3—3

ԲԺԻՇԿ ՊՐԵՕԲՐԱԺԵՆՍԿԻ

Մասնաւորապէս բժշկում է երկարապիւնութեամբ, ֆարադեան և զալվանական հոսանքով ձեռքերի և ոտների անզգամայնութիւնից, ընկճաւորից, ներկային հիւանդութիւններից և կոնտրակտուրայից (մկաններն են անզգամայնութիւն), բժշկում է կոյրերին և խուլներին անզգամայնութիւնից և նոյնպէս ընդունում է կանայքի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին: Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ: Տուն Պոպով Միքայէլեան փողոցի անկիւն № 9 և Ելիսաւրովսկայա № 2, ինտենդանտութեան մօտ, վարձով կանաւորված սենեակներին դիմաց: Домъ Попова, уголъ Михайловской ул. № 9 и Елисаветинской № 2, около Итендантства, противъ Воронцовск. номеровъ. 6—14

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ

Հայկական պատմութիւն մարտը, կանոնաւոր աշխարհաբար լեզուով թարգմանեց և լուսարանեց խորէն Տ. Վ. Ստեփանէ, բազմաթիւ ծանօթութիւններով, նորանոր բաղաւորութիւններով, յաւելուածներով, ընդարձակ յառաջարկումով: Մասնաւոր հայ աշակերտներին կարգաւ և ուսումնասիրելու կարեւոր գիրք է: Գինն է 1 ռուբլի 50 կօպ. Կիւնու է թարգմանչին Θεοδοσία, арх. Χορηνу Степανε. (1 և 15) 4—4

Այն անձինք, որոնք յանձն էին առել տարածել «ԱՐԲԵՑՈՂԻ ՄԱՀ» և «ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» գրքերները, խնդրեմ որ բարեհաճին շուտ ուղարկել թէ ծախված գրքերի փողը և թէ չը ծախված գրքերը, ճանապարհածախսը հանելով ծախված գրքերի գնից, այս հասցէով. Тифлисъ. Въ Анановское училище, Оганесу Юсупянъ. 5—5

ԱՐԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ: Աւանդելի տուրքից սրբա են՝ 1) Առեւտրական ճանապարհութիւն, 2) Առեւտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համբիլի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղադրութիւն: Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից, Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսը հիմնողի բնակարանում, Սոլոյալովսկի Աղէքսանդր ֆրիդմանով տանը, № 9 Սերգիէվսկայա և Նազոնայա փողոցների անկիւնում, զեղատան դիմաց: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԵՍ եղբ. Ծովանովների բանկային գրասենեակում և Կուրսերի հիմնողի բնակարանում: Օտարաբաղադրացիք դիմում են Կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэляну. 19—20 (ե. Ե.)